

ՆԱԽԱԳԾԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ՝ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ԹԵՄԱՏԻԿ
ՄԻԱՎՈՐՆԵՐ» ԹԵՄԱՅԻ ՆԵՐԱՌՈՒՄՈՎ

Նախագծի նպատակն է լուծել բուհական և հանրակրթական ինտեգրված առարկաների դասավանդման մեթոդիկայի երկու խնդիր՝

1) մշակել ինտեգրված ուսուցման մեթոդիկա,

2) զարգացնել մանկավարժական բուհերի բնագիտական ֆակուլտետների ուսանողների և բնագիտության ուսուցիչների ինտեգրված ուսուցում կազմակերպելու հմտությունները:

Դրանց կարևորությունը թելադրված է ժամանակակից կրթական բարեփոխումների գործընթացներում ինտեգրված ուսուցման դերի անընդհատ աճով [6; 8; 9]:

Նախագիծը նախատեսում է՝

1) Ստեղծել «Ջրուլորտ» ինտեգրված թեմատիկ միավորի ծրագիր, ուսումնական նյութեր և ուսուցման մեթոդիկա:

2) Կազմակերպել փորձնական դասեր՝ ուսանողների, աշակերտների համար:

3) Հրատարակել ուսումնաօժանդակ ձեռնարկ՝ «Ջրուլորտ» ինտեգրված թեմատիկ միավորի ուսումնական նյութերով ու դասավանդման մեթոդիկայով, որը

- կհանդիսանա մոդել՝ այլ թեմատիկ միավորների ստեղծման համար,
- կծառայի որպես տեսական հիմք՝ մանկավարժական բուհերում

բնագիտական առարկաների «Դասավանդման մեթոդիկա» դասընթացներում թեմայի ներդրման և բնագիտության ուսուցիչների վերապատրաստումների ծրագրերում «Ինտեգրված ուսուցման կազմակերպում» թեմայի կատարելագործման համար: